

Կայացավ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «Արհեստական բանականությունը (ԱԲ) հայագիտական հետազոտություններում» թեմայով աշխատանքային դպրոցը:

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի (ՀՀԻ) նախաձեռնությամբ և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի (ՀՈՒՖՀՀ) աջակցությամբ իրականացվեց «Հայագիտական կադրերի վերապատրաստում. արհեստական բանականության (ԱԲ) և մասնագիտական նոր մեթոդների կիրառումը հայագիտական հետազոտություններում» խորագրով աշխատանքային դպրոցը, որը իրականացվեց երկու փուլով՝ ս.թ. նոյեմբերի 14–16-ը ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնասիրատան պալատում և նոյեմբերի 28-ին՝ ԵՊՀ Գիտական խորհրդի նիստերի դահլիճում:

Միջոցառման նպատակն էր հայագիտական ոլորտի մասնագետներին ծանոթացնել արհեստական բանականության գործիքների և ժամանակակից հետազոտական մեթոդների կիրառման հնարավորություններին՝ ուսումնասիրությունների արդյունավետությունն էլ ավելի բարձրացնելու և զարգացնելու համար:

Աշխատանքային դպրոցին բացման խոսքով հանդես եկավ ԵՊՀ ՀՀԻ տնօրեն, պ.գ.թ. Վահրամ Պետրոսյանը՝ կարևորելով հայագիտության ոլորտում գիտական գործունեության զարգացման գործում նորարարական տեխնոլոգիաների ներդրման, դրանց կիրառության և հետագա զարգացման հարցերը:

Աշխատանքային դպրոցի առաջին օրը դասախոսությամբ հանդես եկավ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Հայրապետյանը՝ ներկայացնելով արհեստական բանականության ներկա իրողությունները՝ դրանք դիտարկելով հոգեբանական տեսանկյունից: Նա անդրադարձավ նաև մարդ–մեքենա փոխազդեցության առանձնահատկություններին և ԱԲ-ի հոգեբանական ազդեցությանը՝ բացահայտելով ինչպես դրա հնարավորությունները, այնպես էլ վտանգները:

Դպրոցի երկրորդ օրը ծավալուն դասախոսությամբ հանդես եկավ Մարիամ Պետրոսյանը, որը ներկայացրեց արհեստական բանականության գաղափարը և դրա կիրառության հնարավորությունները հումանիտար գիտությունների և, մասնավորապես, հայագիտության ոլորտում: Առանձնահատուկ կարևորություն տրվեց Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի աշխատակիցների գործնական հմտությունների կատարելագործմանը: Հետևաբար, քննարկումների երկրորդ օրը աշխատանքային դպրոցի մասնակիցները հնարավորություն ունեցան իրենց հետազոտություններում գործնականում կիրառելու ձեռք բերած հմտությունները՝ ԱԲ-ի տարբեր գործիքների միջոցով նոր մեթոդներ ներմուծելու համար:

Քննարկվեցին նաև ԱԲ գործիքների օգտագործման հնարավորությունները, դրանց ազդեցությունը հայագիտական ուսումնասիրությունների արդյունավետության վրա, ինչպես նաև ԱԲ կիրառման հետ կապված էթիկական նորմերի պահպանման հիմնարար մոտեցումները:

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի աշխատակիցներից բացի՝ աշխատանքային դպրոցին մասնակցում էին նաև ԵՊՀ ՀՀԻ «Ցեղասպանագիտության» մագիստրոսական ծրագրի առաջին կուրսի ուսանողները:



Состоялась осенняя школа Института армянских исследований ЕГУ на тему «Искусственный интеллект (ИИ) в армяноведческих исследованиях».

По инициативе Института армянских исследований ЕГУ и при поддержке Всеармянского фонда финансирования армяноведческих исследований (ВФФАИ) была проведена осенняя школа «Подготовка кадров в области армяноведения: применение искусственного интеллекта (ИИ) и новых профессиональных методов в армяноведческих исследованиях». Программа реализована в два этапа: 14–16 ноября на учебно-производственной базе ЕГУ в Цахкадзоре и 28 ноября — в Зале заседаний Ученого совета ЕГУ.

Цель мероприятия – знакомить специалистов в арменоведческой сфере с возможностями использования инструментов искусственного интеллекта и современных исследовательских методов для повышения эффективности и развития исследований.

На открытии осенней школы с приветственной речью выступил директор ИАИ ЕГУ к.и.н. Ваграм Петросян, отметив важность внедрения инновационных технологий, их использования и вопросов их дальнейшего развития в деле прогресса научной деятельности в арменоведческой сфере.

В первый день осенней школы с лекцией выступил кандидат психологических наук, доцент Давид Айрапетян, представив нынешние реалии искусственного интеллекта, рассматривая их с психологической точки зрения. Он обратился также к особенностям взаимоотношений «человек-машина» и психологическому влиянию ИИ, раскрывая как его возможности, так и угрозы.

Во второй день школы с развернутой лекцией выступила Мариам Петросян, которая представила идею искусственного интеллекта и возможности его применения в сфере гуманитарных наук, в частности в области арменоведения. Особую важность была уделена совершенствованию практических навыков работников Института арменоведческих исследований. Следовательно, во второй день обсуждений участники осенней школы получили возможность применить приобретенные знания в своих исследованиях на практике для внедрения новых методов с помощью разных инструментов ИИ.

Были обсуждены также возможности применения инструментов ИИ, вопросы их влияния на эффективность арменоведческих исследований, а также фундаментальные подходы, связанные с вопросами об этических нормах.

Помимо работников Института арменоведческих исследований ЕГУ, в осенней школе также принимали участие студенты первого курса магистерской программы «Геноцидоведение» ИАИ ЕГУ.





YSU Institute for Armenian Studies hosts autumn school on applying AI in Armenian studies

At the initiative of the YSU Institute for Armenian Studies and with the support of the Pan-Armenian Foundation for Funding Armenian Studies (HUFFAS), the Autumn School entitled “Training of Armenian Studies Specialists: Application of Artificial Intelligence (AI) and New Professional Methods in Armenological Research” was implemented in two phases: on November 14–16 at YSU’s Tsaghkadzor Educational Center and on November 28 in the Conference Hall of YSU’s Scientific Council.

The event aimed to acquaint Armenian studies specialists with the possibilities of applying artificial intelligence tools and modern research methodologies, thereby further enhancing the efficiency and advancement of their studies.

The autumn school was opened by Vahram Petrosyan, Candidate of Historical Sciences, Director of the YSU Institute for Armenian Studies, who emphasized the importance of introducing innovative technologies into scholarly activity in the field of Armenian studies, as well as their application and further development.

On the first day of the program, a lecture was delivered by Associate Professor David Hayrapetyan, Candidate of Psychological Sciences, who presented the current realities of artificial intelligence from a psychological perspective. He addressed the characteristics of human-machine interaction and the psychological impact of AI, highlighting both its potential and its risks.

On the second day, Mariam Petrosyan delivered an extensive lecture presenting the concept of artificial intelligence and the possibilities of its application in the humanities, particularly in Armenian studies. Special attention was given to enhancing the practical skills of the institute's researchers. Accordingly, participants had the opportunity to apply the skills they had acquired by integrating new methods into their research through various AI tools.

The discussions also covered the potential uses of AI tools, their impact on the effectiveness of Armenian studies, as well as fundamental approaches to maintaining ethical standards when applying AI.

In addition to the staff of the YSU Institute for Armenian Studies, first-year students of the institute's "Genocide Studies" master's program also took part in the autumn school.



